

17300

891.99

U-41

259

- 11/21/38

X 184 phy

Առանձին

891.99
0-41

ԱՐ

ԵԱՏԵՇԻՑ

Եպթ թերթ

Մ Ե Կ Ղ

1003
3683/

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ «ԿՈՒԼՏՈՒՐԱ»
1913

20 05

Ն - Եր 5 Խոշոր թ. 13.

Ելտ բ Այս հայ:

3773

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Ա.

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Ա.

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Ա.

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Ա.

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Ա.

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ԸՆՏԵՐԻՑ ՄՐԱԿ

1.

Գիւղերում, անգործ մարդիկ խմբում են խանութներում, խօսում ու վիճում իրենց շուրջը պտտող հարցերի մասին և կամ թէ վճռում զիւղական այս ու այն խնդիրները: Իսկ Բ. գիւղի Գրիգորի խանութը նոյն իսկ դատարան էլ էր, ուր սովորութիւն ունէր նստելու տանուտէր Բաշխին և ուր արդէն սովորել էին դիմել գիւղականներն իրենց վէճն ու գանգատը նրան ներկայացնելու:

Այդ օրը ոչ մի գանգատաւոր չկար. տանուտէրը փոխանակ սովորականի պէս սրան հայնոյելու, նրան ծեծելու, միւսի վրայ գոռալու, լուրջ դէմքով նստած էր իր սովորական տեղում և ականջները կախած, լսում էր իր դիմացը նստած ինչ որ նորեկի, որը քաղաքացու արտաքին ունէր և հագնուած էր երոպական ամենավերջին տարագով՝ լայնաքիթ կօշիկներ, գերմանական բաճկոն, սպիտակ քաթանի պէս մաքուր պանտմա գլխարկ, կրծքին ժամացոյցի շղթայ, ձեռնափայտ և այլն:

Համա, Արշակ, քո մասին էլ շատ փիս-

փիս բաներ էին ասում, որպէս թէ անգործ էս, իբր թէ սուսի աղջիկներ ես պահում, ամբողջ ժամանակ թուղթ ես խսդում, փող ես կորզում ուրիշներից, մի խօսքով, շատ վատ բաներ: Վերջին ժամանակներս էլ հիւանդացել ես, ընկել շատ չքաւորութեան մէջ, փող են հաւաքել քեզ համար, որ կարողանաս ապրել, ասում էր Ստեփան ապէրը որ Բ. զիւղի առաջաւոր ծերունիներից մէկն էր:

Նորեկը, ձեւնափայտի ծայրով գետնի վրայ գծեր քաշելով, լսում էր ծերունի Ստեփան ապօրը և դուխը շարժում. ապա դառնալով նրան ասաց.

— Ե՛, Ստեփան ապէր, գրանք բոլորը թշնամու խօսքեր են: Ես գիտեմ թէ ով է տարածել դրանք: Անպիտան Վարդանի նամակներից քաղած կլինեն. փառք Աստուծոյ, հիմա ձեր աչքով տեսնում էք էլի, ասաց նա մի տեսակ շշառով, որ ուզում էր վերջին բառերով տսել, թէ հագուստից արդէն կարող էք եզրակացնել իմ ինչ լինելը: Մի քանի բոլք խօսակցութիւնը դադարեցրին գրազրի ներս մտնելով: Տանուտէրը նրան ներկայացրեց անձանօթին՝ տսելով:

— Պ. Արշակ, սա մեր գիւղական գրազիրն է, ինդրեմ ծանօթանաք:

Նո խակոյն տեղից վեր կացաւ, գլխարկը վերցրեց, արագ շարժումով մինչեւ գետին խոնարհեց:

— Արշակ Պետրովիչ Մատֆէկ—ասաց և նրանք միմեանց ձեռք սեղմելով նորից նստեցին: Հըրտեղ էիք և ինչ գործով էք զբաղւում, հարցրեց զրագիրը, որ մի խելօք աչքերով, վառվառուն երիտասարդ էր.

— Ես ապրում եմ Վարշաւում և պարապում եմ առեւտուրով. ունիմ մրգի և մանրունքի խանութ:

— Հայր ունիք:

— Մայր ունիմ, հայր ոչ:

— Բնիկ այստեղացի Էք:

— Այո:

— Զեր մօր անունը ինչ է:

— Խասագիւլ:

— Ուրեմն ձեր տունն աղբիւրի մօտ գտնած գետնափոր խրճիթն է:

— Այն, եթէ ես գիւղում ապրած լինէի, վաղուց ի վեր շինած կլինէի նոր տներ:

Լաւ ձանաշում էին պառաւ Խասագիւլն: Ողորմելի կինը իր կեանքում որքան դառնութիւններ էր տեսել: Զրկւելով ամուսնուց, ամբողջ տան և չորս մանր երեխաների հոգուր ընկել էր նրա վրայ: Ցերեկները սրա նրա տանը բանելով, իսկ գիշերները ճախարակ մասնելով հաց էր աշխատել, կերակրել ու մեծացրել իր փոքրիկներին այն յուսով, որ կմեծանան և իրանց հօր օջախը վառ կպտնեն:

2 - 5 p 5 July 19

Sept 18 - 1913

3773

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ա.

~~Brilliant~~ brilliant

ՀԱՀԻՆԵԱՆ

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻՆ

The Banker's wife

ՀԵՂԻՆԱԾԿԻՑ

2 hours perfectly



СУСЕРЬІІІ ПРЫЧА

1.

Գիւղերում, անգործ մարդիկ խմբւում են
խանութներում, խօսում ու վիճում իրենց շուրջը
պատող հարցերի մասին և կամ թէ վճռում
զիւղական այս ու այն խնդիրները: Խսկ Բ. զիւղի
Գրիգորի խանութը նոյն խսկ զատարան էլ
էր, ուր սովորութիւն ունէր նստելու տանուտէր
Բաշխին և ուր արդէն սովորել էին զիմել զիւղականներն իրենց վէճն ու զանգաար նրան ներկայացնելու:

Այդ օրը ոչ մի գանգատաւոր չկար. տա-
նուաէրը փոխանակ սովորականի պէս սրան հայ-
նոյելու, նրան ծեծելու, միւսի վրայ գոռալու,
լուրջ դէմքով նստած էր իր սովորական տեղում
և ականջները կախած, լսում էր իր զիմացը
նստած ինչ որ նորեկի, որը քաղաքացու արտա-
քին ունէր և հագնւած էր երոպական ամենա-
վերջին տարագով՝ լայնաքիթ կօշիկներ, գերմա-
նական բաճկոն, սպիտակ քաթանի պէս մաքուր
պահամա զլիւարկ, կրծքին ժամացոյցի շղթայ,
ձեռնամափայտ և այլն:

Համա, Արշակ, քո մասին էլ շատ փիս-

Բայց նախախնամութիւնը ու էր զրել Խասպիւլի ճակատին։ Երեխաներից երկուսը, մէկ օրում մեռել էին գիտաբիտից, մէկը բնկել էր սայլի տակը նոյնպէս մահացել, մասացել էր միայն Արշակը, որ երեխաներից ամենից կրտսերն էր, մօք յոյժն ու ապաւէնը։ Արշակը մեծացել, 21 տարեկան էր եղել և մայրը գոհ էր իր վիճակից ու ամեն օր փառք էր տալիս Աստծուն, որ վերջապէս այս մէկը բաշխեց իրան։ Եւ Խասպիւլը ուրախ էր իր չարաճի ու երես առած Արշակով, այլևս չէր մտածում, կրած ցաւելի ու վշտերի մասին։

Բայց ահա մի զեղեցիկ օր Արշակը յայտնում է մօրը, որ զնում է օտարութիւն փող աշխատելու, գիւղում ուրիշի դոներին ծառայութիւն անելով կարելի չէ ապրել։

Գնացել էր վեց-եօթ տարի և մի նամակ չէր ուղարկել իր վշտահար մօրը։ Բ. գիւղի տղաներից Վարդանն էլ էր գնացել Վարշաւա և նրա նամակները լաւ չէին խօսում Արշակի մասին։ Խեղճ մայրը այնքան լաց էր եղել, որ աշքերը կուրացել էին։ Քանի-քանի անդամ գնացել էին տունը գրել, կապերար կամ պղինձը տանից հանել՝ պետական և հասարակական տուրքի պատճուռի։

Եւ այսօր ահա տղան եկել է։

Խանութ մտաւ Մհօննց Վանէսը, բարեեց,

յետոյ գիմեց Արշակին ձեռքը պարզելով.
— Այ, զու բարով ես եկել, մեր անդայ, քէֆդ,
հալդ ինչպէս է. գէհ, ասա, մի տեսնեմ։
— Շատ լաւ եմ, սահանէը վանէս, ձեր տանեցիք ինչպէս են։

— Ողջ և առողջ։ Բայց զու ասա, մեր Վարդանը ինչպէս է, ինչ է շինում, Երբ է մտածում գիւղ գալ։

— Է, նրա բանը վատ է, պատասխանեց Արշակը ճիւաղական ծիծաղով և գէմքը կապկի նման ծոմուելով։ Նրա բանը շատ վատ է, քաղցած փորով ամբողջ օրը ընկած փողոցներն է չափչփում։ Աշխարհում լաւութիւնը չէ անցնում. քանի անդամ նրան սովաման լինելուց ազատել եմ, քանի-քանի անդամ փող եմ տւել, շոը եմ տւել, ասել եմ, այ մարդ, արի ինձ մօտ, իմ խանութում կանգնի, առեւտուր արա, մարդ գարձիր, բայց չէր լսում իմ խօսքերին և փողոցներն ընկած ման էր գալիս ու յետոյ էլ նամակ է զրում այստեղ՝ թէ Արշակը այսպէս է, այնպէս է։

Մեղաւորը ես եմ եղել, միթէ չգիտէի էն առածը, որ ասում է. «օձը տաքացնողին կխայթի»։ Բայց եթէ մէկ էլ ձեռքս կընկնի, ես այն ժամանակ ցոյց կտամ նրան, թէ ինչ ասել է, վարկարեկ անել մարդու։

Վանէսը կարմրեց և զարմանալով նայում

էր Արշակին։ Վարդանը իր աներոջ տղան
էր և նա էր գրում այս միենոյն խօսքերը սո-
րանից մի տարի առաջ Արշակի մասին, հիմա
էլ սա է եկել, նրա մասին այսպէս է խօսում։

— Արշակ, գիտես ի՞նչ, ես ոչ Վարդանի նա-
մակներին եմ հաւատում և ոչ էլ քեզ. ասած է.
«Մինչեւ երկու գանգատաւոր իրար մօտ չլինեն,
չէ կարելի ճշմարտութիւնը իմանալ», զլու հա-
մար էլ ես լուսւմ եմ։

— Է՞լ, Աստւած իրեն հետ, Արշակ, ասում
ես առետուրդ լաւ է հոգ. հարցընց խանութպան
Գրիգորը, որը շողոքորթ արտաքինով մի մարդ էր։

— Ի՞նչ լաւ, էլ խօսք ունի, օրական որ 100
մանէթի առետուր չանեմ ի՞նչ լազաթ։

— Իսկ զուտ աշխատանք ո՞րքան է լինում։

— Դա օրի և յաջողութեան վրայ է կախ-
ած. այնպէս օր է լինում 20 ր., 10 ր., 5 ր.
և այլն։

— Ընկերդ առացիր ոռւս է, բա ի՞նչպէս ես
նրան հաւատացել։

— Բայց ինչու չպէտք է հաւատալ, չէ՞ որ
նա էլ ինձ հետ ընկեր է։ Այնտեղի մարդիկ
մերոնց պէս չեն, նրանք օրինուած բա-
ներ են։

— Ախաղէր, էս քանդւած գիւղերում ոչինչ
չկայ, անում ես անում, էն վաղի մասալի ասած.
«Խոխալի զլուխը ոչինչ չես զցում»։ Ախսոս չէ

քաղաքը, փողը շատ, ապրուսում լաւ։ Զէ, Աստ-
ւած վկայ, միաքս փոխել եմ, պէտք է ես էլ գնամ;
բաղդու փորձեմ օտարութեան մէջ։

— Դու զեռ բալորը չես խմանում ինչ կայ
քաղաքներում, եթէ գնաս էն ժամանակ կիմանաս։

— Ե, որդիք, այդպէս մի խօսէք, զլուխը
բարձրացնելով ասայ տէր Հայրապետը, որ իրան
օրում շատ լաւ ու վատ օրեր էր աեսել և խնա-
մող ձեռք չլինելուց, վաղաժամ թառամել էր։

— Որդիք, շարունակեց տէր հայրը, էլի մեր
ու հողը հարիւր անդամ բարձր է քաղաքներից,
մեր հին, ու ու գետնափոր խրճիթները աւելի
թանկագին քաղաքների հսկայական, պալատա-
նման աներից, որովհետև զիւղերումն է, ուր
կայ զեռ ևս ոէր, յարդանք և միմեանց դժբախտ
ըոպէներում՝ ձեռք կարծաւելը։

Օտարութիւն մի գնացէք, աչքներդ մի տըն-
կէք հեռու ճանապարհի վրայ, այլ ձեր հողը մշա-
կեցէք, որովհետև այն, որին զուք վնասում էք,
ինքը կայ ձեզ մօտ։

Այս իմ չորացած ձեռքերը քանի երիտա-
սարդներ են գրել հողը ծաղիկ հասակում, որոնք
վերադարձել են հիւծւած և մաշւած օտարու-
թեան մէջ։

Քաղաքում ձեզ գործ կտան, քանի ջահէլ
էք, իսկ հէնց որ ծերացաք, այլես ձեզ ոչ ոք չե-
նայի, կմնաք ծարաւ ու անօթի։

Կվերադառնաք հայրենիք, այստեղ էլ օր չէք
ունենայ, անտեսութիւն չունենալու պատճառը
և ձեր ծերութիւնը կանցնի գառնութեամբ:

— Տէրտէր, ախր գիւղերումն էլ ապրուստ
չկայ, գիւղում ապրելու համար կամ փող պէտք
է ունենաս և կամ բոռնցքի ոյժ. ասաց Գրի-
գորը՝ աչքերը պլստացնելով:

— Տեսնում ես, Գրիգոր, այն քոյն ու մա-
ցառը կոխած խոպան դաշտերը և այն ընդար-
ձակ անտառը, աշխատիր, քրաինք թափիր նրանց
վրայ և զու մի քանի տարուց յետոյ կունենաս
լաւ վարելահողեր և գեղեցիկ մրգի այդի:

— Բայց, չէ որ, զրանց համար հարկաւոր է
փող, աղքատ Շիւղացին որտեղից ճարէ, ինչպէս
կարող է նա տալ այն սոսկալի տոկոսները, որ
պահանջում են ազբուկները:

— Հիմնէք գիւղում մանր-վարկի բանկ, ա-
սաց զրագիրը, ուղիղ հայելով Գրիգորին,
որն ամենաթունդ հակառակորդն էր գիւղական
բանկերի:

— Է, զու էլ բան ասացիր, հացի փող չկայ,
գանձարան ես ուզում հիմնել:

— Ոչ թէ փող, այլ մարդիկ չկան, պատաս-
խանեց գրագիրը, գառնութեամբ երեսը շուր-
տալով նրանից:

— Լաւ, թողնենք այս խօսակցութիւնը և
Արշակի համար մի լաւ հարսնացու գտնենք, խօ-

սեց Մարտիրոսը, որ մինչև այդ լուս նստած էր
և սքանչանում էր Արշակի արատքին զարդերով
և շորերով:

Ամառ ու ձմեռ նրա քթի ծայրը միշտ կար-
միր էր լինում, որովհետեւ ամեն օր գցում էր
բաւականաչափ Պիզատոսի արցունքից: Անգարդ
էր նա և այդ ցոյց էին տալիս նրա հաստ վիզն
ու լիքը, ուսած այտերը:

— Ճիշտ է ասում Մրտօն, ձայն տիհն ամեն
կողմից գիւղացիք.

Իսկ Արշակը ինքնաբաւական ժպիտը գէմ-
քին, աչքերը զցած առաստաղին, աջ ձեռքով
շփում էր մօրուքը, իսկ ճախով՝ խաղացնում էր
ժամացոյցի շղթան:

— Բայց, այ ոշգիք, ասաց Ստեփան ապէրը,
հիա աղան նոր է եկել, զեռնա իրան թողէք մի
դրստի, յետոյ:

Ստեփան ապէրը ուզում էր ասել, որ թողէք
մի փոքր մնայ, աեսնենք ինչ տեսակ բնաւորու-
թեան աէր է, ինչ ունի, որովհետեւ վաղուց էր
որ զնացել էր և ոչ ոք չէր ճանաչում, իսկ փոքր
հաստակում երես առած զող ու սրիկայի մէկն էր:

— Ի՞նչ ես ասում, Ստեփան ապէր, մէջ ըն-
կաւ քեռի Աշոտը. էլ որ օրւայ քեռին էմ, Ար-
շակիս համար այնպէս աղջիկ ուղեմ որ մի հատ
լինի մեր գիւղում: Ի՞նչ ես ասում, Արշակ, հա-
մածայն ես թէ ոչ. լաւ իմացիք, որ եթէ ոչ էլ

ասելու լինես, անպայման զլուխոդ կապելու եմ, քաւական է, խեղճ քրոջս կեանքը մաշեցիր:

— Դեռ կմտածեմ քեռի:

— Ել ի՞նչ մտածել, հօ ջահէլ չես, ուզում ես մեծանալ կամ թէ պանկւելու փռղը հօ նոր չես աշխատելու:

— Մի լաւ աղջկայ տեղ եմ գիտում, ասաց Մարտօն, շատ սիրուն և տնտես:

— Ո՞ւմ աղջիկն է, հարցրին ամեն կողմից:

— Տմբագեօգենց Յովսէփի, խելօք երեխայէ, գլխին աղուն աղաս չի խօսի:

— Այ լաւ է գտել, ձայնեցին ամեն կողմից:

— Աղջիկը լաւ է, խօսք չունի, թէ գեղեցիկ է և թէ արարմունքով, ասաց Աշոտը զիմելով Արշակին. հասած աղջիկ է, կլինի 14 տարեկան շուտ կտան: Տէրտէր, Ստեփան ամի, ի՞նչ էք ասում, լաւ չէ Անթառամը:

— Ի՞նչ ասեմ որդի, դուք զիտէք, բայց շտապում էք, աւելի լաւ է քիչ սպանէք. պատաժիանեց տէրտէրը ծխամորձը լցնելով:

— Լաւ է ասում, տէր Հայրապետը, աւելացրեց Ստեփան ապէրը, ննջելով նստած տեղը:

— Տմբագեօգենց Տիգրանին էլ ոչինչ, խօսեց տանուտէրը ըութ մատը և ցուցամատը իւրար քսելով, թէ ինձ տեհաս, Աշոտ, ես ձեռաց, գործը գլուխ կբերեմ:

— Լաւ, Արշակ, այդ երկուսին էլ քեզ ցոյց

կտամ, ոլին որ հաւանես, ուգելու եմ:

— Արշակ, էլ ինչ նորութիւններ գիտես, պատմիր մի քիչ. հարցըեց Գրիգորը, ականջները սրելով:

— Ի՞նչ պատմեմ, Գրիգոր, մարդ ի՞նքը պէտք է գնայ որ համ ու լազաթ առնի:

Տէրտէրը ասում է, թէ զիւզը քաղաքից լաւ է, բայց չգիտէ, քաղաքում այնպէս բաներ կան, որ մարդ ականջով լսում, աչքով տեսնում է, չի հաւատում, կարծում է թէ երազի մէջ է:

— Այ բալա, պատասխանեց աէրտէրը, հիմա խօսք չունեմ ասելու, երբ կծերանպա. այն ժամանակ կյիշես իմ աստծները: Ստեփան, գնանք եկեղեցի, արդէն ժամանակ է: Համբարձում, գնա, զանգերը քաշիր, զիմեց նա ժամհարին, որ ծոյլ ծոյլ թիկն էր տւել պատին և քնել էր մեղմիկ քնով:

Ու վեր կացան բոլորը, գուրս գնացին խանութից: Գարնանային զով քամին փշում էր, քշելով երկնակամարի վրայ եղած ամափի կատըները, որոնք մերթ բաժանւելով, մերթ միանալով գնում լուծում էին անհուն եթերում:

Նախիբը, արօտից գառնում էր տուն. կոմերի ու զոմէների բառանչը, նախրապանների հարայ հրոցը, երեխաների աղաղակը, թոշոնների երեկոյեան մեղեղիների քաղցրիկ եղեջները, եկեղեցու փոքրիկ գանգակների անուշ զօ-

դանջունը լցրել էին օդը հազար ու մի ձայնեւ-
րով և գիւղը այդ պահուն աւելի գրաւիչ, աւե-
տի գեղեցիկ էր երեւմ մարդու:

2.

Ժամի մօտ չորսն էր. մինչև այդ ժամա-
նակ երկնակամարը պարզ էր ու վճիռ, միայն
սարի վրայ կուտակւած էին ամպեր: Բայց ահա,
մի փոքրիկ սև ամպի կտոր բարձրացաւ, յետե-
ւից քաշելով ամպերի սարեր և հետզհետէ տա-
րածւելով բռնեց ամբողջ երկնակամարը, մի ան-
դամից, պարզ օրը մթնացնելով:

Մի բովէ ամեն ինչ լսեց: Ոչ մի ձայն
ծպտուն չէր լսւում. միայն գետն էր, հեռուում
խոր ձորի մէջ, բնութեան այդ խորհրդաւոր պա-
հուն, գորգոռալով և աղաղակելով անցնում, վշ-
շացնելով օձի պէս: Կարծէք նա էլ հասկանում
էր մօտալուտ վտանգը և աւելի ուժգին ձայներ
էր հանում, խախտելով տիրող խորհրդաւոր լոռ-
թիւնը:

Յանկարծ փշեց քամին, փոթորիկը բարձրա-
ցաւ, երկինքը դղրդաց, կայծակը խփեց և սա-
րերն ու ձորերը խուլ արձագանք ոււին: Ակսեց
տեղալ մեծ-մեծ կաթիլներով անձրես, բայց շու-
տով կարկուտի փոխւեց և կարկուտը արագու-
թեամբ ցած էր թափւում, աւերելով ամեն ինչ:
Փչում էր քամին, գոռում էր գետը, խշում էր

կարկուտը և այդ կատաղի ձայների մէջից լսւում
էր Բ. գիւղի եկեղեցու զանգակների անուշ զօ-
ղանջունը, որոնք անչափ գուրալի ու ներգաշ-
նակ էին հնչւում բնութեան այդ կատաղի հա-
մերգում:

Շուտապվ ամպերը ցրւեցին, քամին դաղարեց
և արեր կամացուկ իր երեսը հանեց ամպերի
տակից, լցնելով անուշ ջերմութեամբ սարերն
ու ձորերը:

Մարդիկ, կենդանիները, թռչունները դուրս
եկան իրանց թագստարաններից, կարծէք ոչինչ
չէր պատահել, կեանքը մտաւ իր սովորական
ընթացքի մէջ, միայն դեռ ևս հոսում էին, փո-
քրիկ առւակներով ջրերը:

Գեղջուկ կանայք և աղջիկները, կուժերը
ուսերին, գնում էին աղբիւր ջուր բերելուտ
Տմբլագեօքենց Յովմէփի աղջիկն էլ կուժը ուսին,
գնում էր աղբիւրը: Նրա երեսը համարեա թէ
բաց էր, որովհետեւ մի ձեռքով բռնել էր կուժը,
իսկ միւսով, շրջաղգեստի ծայրերը, ցեխի պատ-
ճառով:

Նրա բարձր ու գեղանի հասակը, ձիւնի
նման սպիտակ երեսը, սև ծով աշքերը, ովկիա-
նոս կուրծքը, քարի պէս կարծր սրտերը կարող
չէին փափկացնել:

Նա քայլում էր անհամարձակ, աշքերը գե-
տին զցած, վախկոտ եղջերուի նման: Նա կա-

տարեալ շուշան էր, նոր թփից պոկած, մի անգին մարգարիտ, կուռք երկրպագութեան արժանի:

Նրա առաքինութիւնը, խոնարհութիւնը, աշրարմունքը, ասելիք էր դարձած:

Աղբիւթի մօտի փոքրիկ խրճիթի առաջ կանգնած էին երկու մարդ և ցածր ձայնով խօսում էին:

— Անտէր կարկուաը բաւական վաստակինի, ասում էր մէկը, բայց լաւ էր որ մանր էր և շուտ կտրւեց, թէ չէ բաններս բուրդ էր:

— Է, ախալէր, ի՞նչ եմ տէել քաղաքին, անձրես գայ, կարկուան գայ բոլորս մէկ հաշիւ է: Իսկ զիւղում կարկուան եկաւ գայ է, անձրես չեկաւ գայ է, անձրես շատ եկաւ գայ է:

— Լաւ, եթէ բոլորս էլ քաղաքացի դառնանք, ապա գիւղացի ովկ կլինի և հաց մրտեղից կճարւի: Բայց թողնենք, Արշակ, լաւ տես, պալիս է Յովսէփի աղջիկը, այն կարմիր թաշկինակովն է:

Խօսովները Արշակն ու Սշոտն էին, որոնք կանգնել էին Անթառամին տեսնելու: Անթառամը մօտենում էր գրանց: Արշակը աչքերը ցցել էր աղջկայ վրայ և իր խամբածուխոր ընկած աչքերով նրա աչքերն էր վնասում: Արշակի բերանը բացւել էր, քթածակերը լայնացել և սիրալ արագ-արագ խփում էր:

Աղջիկը տեսնելով, որ անծանօթ մարդիկ

իրեն են նայում, ամօթից կարմիր կտրեց, թաշկինակն իջեցրեց դէմքի վրայ և արագացրեց քայլերը: Արշակն աչքերը չորս բացած նայում էր նրա յետեկից, շունչը պահած, տեղից չշարժւելով, ինչպէս որսկան, որի գնդակը նպատակին չհասնելուց, դեռ երկար նայում է որսի յետեկից, թէպէտ վերջինս արգէն վաղուց անյայտացել է: Իսկ Աշոտը ինքնաբաւական ժամանակ գէմքին, նայում էր քրոջ որդու երեսին և դմայլում նրա սակագութեամբ:

3683/ — Ի՞նչպէս էր, հաւանեցիր, ասաց Աշոտը լուսթիւնն ընդհատելով, այդպէս ազիկ ոչ մի քաղաքում չես կարող ճարել:

Իսկապէս ճիշտ էր ասում Աշոտը. միայն ազատ ու վարթամ լեռների բնութիւնը կարող էր ծնել այնպիսի չքնաղ արարածներ, որպիսին երեց էր Անթառամը:

— Քեռի, ինզրում եմ հէնց այս գիշեր գնաս և առաջարկութիւն անես:

— Կզնամ, աչքիս վրայ, դու յուսով եղիր, որ անպայման գործը զլուխ կըերեմ:

— Բայց, քեռի, կարող է պատահել որ չտան.

— Այդ քո գործը չէ, գնանք:

Ու այսպէս խօսելով մասն ներս: Արեւ իր վերջին ողջոյնն էր տալիս երկրին և օրւայ երշակատե ճանապարհորդութիւնից յոզնած, գնում էր հանգստանալու լեռների սառը ծոցում:

3.

Գիշեր էր, աստղալից գիշեր։ Լուսնեակը հետ
հարսի նման սահում էր կապոյտ երկնակամարի
վրայ և արթուն հովուի պէս հսկում քնած աշ-
խարհը։

Բ. գիւղի խճիթներն էլ լուսաւորւած էին
աղօտ լոյսով։ Գիւղում տիրում էր գերեզմա-
նային լոռութիւն և այդ լոռութիւնը խանգարւում
էր մէկ-մէկ շների հաջոցով։

Տմբլագեօգենց տունն այդ գիշեր սովորա-
կանից աւելի լաւ էր լուսաւորւած։

Յովսէփը աղքատ, խեղճ մարդ էր, համեստ
աշխատաւոր և ունէր ահազին ընտանիք, բաղկա-
ցած ութ հոգուց։

Ցիսուն տարեկան էր, բայց տեսնողը նրան
կասէր, որ 60—70 տարեկան կլինի։

Բուխարու մօտ նստած էին Յովսէփն ու
Աշոտը և ցածը ձախով խօսում էին։

— Հիմա ասա, խօսք տալիս ես, որ վաղը
գիշեր նշանը բերենք, թէ ոչ։

— Բայց Աշոտ, աղջիկ տալլ այդպէս էլ շուտ
չի լինի, զուրբան, չէ որ սա մալ բազարի չէ,
այլ ջան բազարի է։ Մէկ էլ նրանից եմ քաշ-
ւում որ, այստեղ չէ մնալու։

— Ախպէր, պատակւելուց յետոյ անմիջապէս
կգնան Վարշաւա, մի քանի ամիս մնալուց յե-
տոյ գործները կփերջացնեն և կգան այստեղ։

Եթէ կարողացաւ խանութիր շուտ ծախել, շուտ
էլ կվերադառնայ։

— Լաւ ես ասում, Աշոտ, բայց ախը հաստատ
չգիտենք քաղաքում բան ման ունէ, թէ սուտ
է խօսում։

— Ի՞նչ սուտ, ախպէր, խօսեց կշտամբանքով
Աշոտը, չես տեսնում նրա շորերը, ման դալը,
քսակը որ հանում է՝ կարծես վշած գինու տիկ
լինի։

— Դժւար ինդիր է, ախպէր, չգիտեմ ինչ
անեմ, ինձ համար էլ շատ ամօթ է քո խաթըը
կոտրել, ասաց քաշելով Յովսէփը Աշոտին։

— Չգիտեմ ինչ խելքի տէր մարդ ես, տօ,
մարդը հէնց երկու երեք հարիւր մանէթի նշան
է բերում, լաւ կլինի, որ սրան էլ մեծ աղջկադ
նման տաս մի նախրչու, որ օրւայ հացի կա-
րոտ մնայ։

— Վաղը ճաշին, պատասխանեց մի փոքը
մտածելուց յետոյ Յովսէփը, ես պատասխան
կտամ, իսկ այս գիշեր դեռ հարկաւոր է տանե-
ցոց հետ մասլահաթ անել։

— Շատ բարի, ովք է բան ասում։ Բարի գիշ-
եր, յուսով եմ, որ պատասխանը լինելու է այս։
ասաց Աշոտը, ուրսիս տեղից վեր թոշելով։

Յովսէփը բռնեց թեկից և նստեցրեց։

— Կաց հաց ուտենք, յետոյ գնայ։
Աշոտի երեսը աւելի պայծառացաւ, որով-

հետեւ Բ. գիւղի սովորութեան համամատ, եթէ աղջկատէրը խնամախօսի համար հաց բերեց, նշանակում է մաքումը կայ աղջիկը տալու, իսկ եթէ հացի չպահեց, արդէն պարզ է, որ չէ տալու աղջիկը:

Նաևագիւլը, Յովաէփի ամուսինը որ տարիքաւոր մի կին էր, հաց բերեց և նոր բարեկամները քաղցր խօսելով նստեցին սեղան:

Ըսթըրիքից յետոյ Աշոտը գնաց տուն, սպասելով վաղւան պատասխանին:

Միւս օրը Յովաէփը համաձայնութիւն տւեց Աշոտին, ի միջի այլոց ասելով, որ թէև կինը հուկառակ էր, բայց ինքը լաւ ճանաչելով Աշոտին, նրա խաթրու տալիս է:

Աշոտը ուրախուրախ գնաց Արշակի մօտ և յայտնեց, որ ամեն ինչ վերջացած է և պէտք է վազը երեկոյեան գնան նշան դնելու:

Միւս օրը երեկոյեան նշան դրեցին իսկ մի քանի օրից յետոյ հարսանիքն էր:

Փողերի, գափի և ուռաների, ձայնը բռնել էր ամբողջ Բ. գիւղը, Երկու օր ու գիշեր ուրախութիւն եղաւ, իսկ երրորդ օրը ցերեկւայ ժամը 12-ին քահանան եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարեց նրանց պատկի ծէոր, երեկոյեան գէմ ամեն ինչ վերջացաւ: Գիշերը միայն գիւղի ջահէները պէտք է գնային քիչ ուրախութիւն անելու և բաժանելու իրանց մէջ նւէր ստացած

խօնչաները և քաղցրելէնք:

4.

Ժամի 8-ի էր. Բ. քաղաքի ծայրում գտնւող գրուավայրում կեանքը սկսել էր եռալ: Մարդիկ ցերեկւան տաքութիւնից յետոյ դուրս էին եկել աներից, մի փոքր թարմանալու:

Ման էր գալիս երկսեռ հոծ բազմութիւնը ուրախ ու գւարթ, լցնելով այգին խինդ, աղազակով: Վերջին նստարաններից մէկի վրայ նըստած էին երկու հոգի և իրար հետ կամացուկ փսփսում էին:

Նրանցից մէկը Արշակն էր, իսկ միւսը մի հաստ, կարճահասակ, փառթամ հագուստով մի պարոն:

— Լաւ, լաւ, ասում էր անծանօթի, ես քեզ լաւ եմ ճանաչում, յիշում ես մի քանի ամիս սրանից առաջ այն սուսի աղջկայ համար էիր այդպէս խօսում:

— Ես քո վրայ, Արշակ, սաստիկ բարկացած էի և այն ի՞նչ անամօթն էր, որ բերեցիր օձիքս փաթաթեցիր, եթէ չկինէր հիւրանոցի ծառան, ես կորած էի. բայց ինչեէ, եթէ սա էլ ասածիդ պէս չկինի, էլ ձեռքիցս չես սրբնի:

— Դուք բոլորովին անհոգ եղէք սրա մասին, Մանուէլ կարպովիչ, պատասխանեց Արշակը շողոքորթ ձայնով:

— Արշակ, ես գնում եմ ուզիղ առւն, խօսեց մի փոքր ընդմիջումից յետոյ Մանուէլ Կարպովիչը, դու էլ գնա հիւրանոց, վերցրու նրան և եկէք մեզ մօտ, վարձատրութիւնն էլ աշքիս վրայ:

Երկուսն էլ տեղներիցը վեր կացան. Մանուէլ Կարպովիչը գնաց տուն, իսկ Արշակը անցնելով մի քանի փողոցներ, վերջապէս մտաւ «Վիկաօրիա» հիւրանոց, որտեղ էր և Անթառամբ:

Տեսնելով Արշակին, Անթառամբ վիր կացաւ, մօտեցաւ նրան և ասաց աղերսածայն.

— Ո՞ւր էր մինչև հիմա, սկրագ ճաքում էր մենակ, այս չորս պատերի մէջ:

— Բարեկամիս հետ խօսում էի, սիրելիս, պատասխանեց Արշակը, քնքշաբար շոյելով նրա զուլիս:

— Ե՞րբ ենք գնալու այստեղից, երկար պէտք է մնանք այս քաղաքում, հարցրեց Անթառամբ անհամբեր:

— Զէ, սիրելիս, զիշերը կմնանք, վաղը առաւտեան ճանապարհ կընկնենք: Անթառամբ, հիմա պատրաստիր գնանք ընկերոջն մօտ:

— Բ՞զ է ընկերդ, մեր գիւղացի է, Արշակ:

— Ռէ, նազելիս, այստեղացի է, մի շատ հարուստ և պատւաւոր մարդ է:

— Կի՞ ունի նու:

— Ունի, բայց ամառանոց է գնացել:

— Բա էլ ես գալիս եմ ինչ անեմ:

— Ինչպէս թէ ինչ, կգնանք, էլիօսենք մի փոքր և կվերադառնանք: Հիմա որ գնանք ընկերոջն մօտ, քեզ աղատ պահիր և խօսիր նրա հետ այնպէս, ինչպէս ինձ հետ ես խօսում, դու դեռ չգիտես քաղաքի սովորութիւնը:

Անթառամբ էլ ոչինչ չխօսեց, քաշքշելով մի կերպ հագաւ շորերը:

Մի ժամից յետոյ նրանք գուրս եկան, նստեցին կառք և սլացան Մանուէլ Կարպովիչի տունը: Ճանապարհին ոչինչ չխօսեցին իրար հետ ամուսինները. Արշակը թաղւած էր մտքերի ժողովում, իսկ Անթառամբ նայում էր մայթերով անցնող խայտաբղետ ամրոխին, խանութներին և հիանում Բ. քաղաքի փարթամութեամբ: Տունը, որտեղ կանգ առաւ կառքը, մի հսկայական երեքշարկանի շինութիւն էր:

Արշակը կառքից ցած թռաւ, իջեցրեց Անթառամին և մօտենալով դռանը, զանգահարեց: Իսկոյն տան գոււրը բացւեց և շէմքին երկաց գեղեցիկ հագնւած մի ծառայ, որն իշկոյն ներս հրուիրեց եկողներին, ժպտագէմ բարեեց Արշակին և մի խորը զննողական հայեացը ձգեց Անթառամի վրայ:

— Գարձեալ մէկը, ասաց ժառան կամացուկ և շտապով վերե բարձրացաւ նրանց յետերից: Մանուէլ Կարպովիչը բնակւում էր տան վերին

յարկում և գրաւում էր 8 սենեակ, չնայած որ
ինքն ու կին էին:

Պաշտօնով նա բժիշկ էր և ունէր հօրից ժա-
ռանգած ահազին կալւածքներ:

Թահլիճի գուանը մանողներին դէ՞ ։ և ոց
տան տէրը, շատ սիրալիք կերպով բարեկլով Ան-
թառամին և մի հայեացքով չափելով ոտից մին-
չե զլուխ:

— Համեցէք, համեցէք, իմ տան գաները տի-
կին, այսուհետեւ ձեր առաջ բաց է. ապա դառ-
նալով Արշակին ոռւսերէն ապրես, արժէ գո-
վելուզ:

— Տեսնում էք, որ ես ստախօս չեմ, պա-
տասխանեց Արշակը, ջարդւած ոռւսերէնով: Մա-
նուէլ կարպովիչը հիւրերին հրաւիրեց դահլիճ,
որ մի ընդարձակ սենեակ էր բուրժուական թան-
կագին կարասիներով զարդարւած: Անթառամը
ապուշի պէս մէկ նայում էր հսկայական հայե-
լիներին, մէկ հրաշալի գորգերին և մնացել էր
դմայլած, չիմանալով, թէ որտեղ է գտնուում ինքը:

— Հաւանում էք տիկին Անթառամ, մեր դահ-
լիճը, դիմեց նրան տան տէրը, նկատելով նրա
հիացմունքը: Անթառամը զիմով զրական նշան
արաւ: Արշակը բռնելով նրա ձեռքը ասաց.

— Խօսիր, սիրելիս, Մանուէլ կարպովիչի
հետ, չէ որ նա մեր բարեկամն է, ինչ ես այդ-
պէս մնջի պէս նշաններով խօսում, ապա դառ-

նալով Մանուէլ կարպովիչին ոռւսերէն, ասաց-
— ես գնում եմ, թողնելով քեզ ազատ, ա-
ռաւօտեան կզամ:

— Լաւ, պատասխանեց Մանուէլ կար-
պովիչը:

— Անթառամ, զու մնայ այստեղ, ես այս
րոպէիս կզամ:

— Ո՞ւր ես գնում, Արշակ, ես մենակ այս-
տեղ չեմ կարող մնալ, ես էլ եմ զալիս:

— Խելացի եղիր, անուշիկս, ասացի որ այս
րոպէիս գալիս եմ, խօսիր Մանուէլ կարպովիչի
հետ, ասաց Արշակը, արագ մօտեցաւ դոներին
և անյայտացաւ:

Մնացին Անթառամը և Մանուէլ կարպո-
վիչը մենակ, որոնք մի առժամանակ լուռ իրար
էին նայում: Առաջինը վախենում էր որ մի օ-
տար մարդու հետ նստած է միայնակ, իսկ վեր-
ջինը մտածում էր թէ ինչպէս ոկսէ խօսակ-
ցութիւնը:

Վերջապէս լոռութիւնը խզեց բժիշկը, աեղից
վեր կենալով.

— Տիկին Անթառամ, անյնենք միւս սե-
նեակը այստեղ շատ բաներ կան տեսնելու, նայիր
մինչեւ Արշակի գալը:

Անթառամը նայեց նրան, բայց աեղից չը-
շարժւեց:

— Ինչու ինձ հետ չես խօսում սիրունիկ,

առնա, ինչպիսի գեղեցիկ ընծայ եմ գնել քեզ համար, այս ասելով հանեց զրպանից մի սիրուն արկղիկ և բանալով ցոյց տւեց մի շատ թանկաղին ապարանջան, վերցրու, Անթառամ, այս քեզ համար եմ գնել որպէս առաջին ընծայ:

Անթառամը լուռ էր, նա վախենում էր, նա ցնցւում էր Մանուէլ Կարպովիչի իւրաքանչիւր խօսքից և անհամբեր սպասում էր Արշակի ներս մտնելուն:

— Զէ, սրա հետ ուրիշ տօնով պէտք է խօսել, մրմնջաց քթիւ տակ բժիշկը և մօտենալով Անթառամին, ձեռքը բռնեց:

Անթառամը խելագարի պէս տեղից ցատկեց և սարսափահար կանչեց.

— Արշակ, աշխատելով ձեռքը ազատել:

— Իզուր է Արշակ կանչելո, ասաց բժիշկը կրքոտ, նա էլ չի գայ, դու իմն ես և ամուր գրկելով նրան, սկսեց համբուրել:

Անթառամը արձակելով օրհասական ճիչ, ուզեց փախչել, բայց իզուր: Բժիշկը մէկ ձեռքով բռնել էր նրա իրանը, իսկ միւս ձեռքում բռնած ունէր ատրճանակը:

— Եթէ մէկ էլ ձայն հանես, կսպանեմ, զուաց նա կատաղած վագրի նման:

Անթառամի աշքերը սեացան, գլուխը պտոյտ տւեց և նա թուլացած ընկաւ Մանուէլ Կարպովիչի գիրկը:

Բժիշկը վերցրեց նրան, տարաւ տիկնոջ ննջարանը, զրեց մահճակալի վրայ, ծածկեց գոներն ու լուսամուտները և սկսեց հանւել...

5.

Առաւօտ էր: Արշակը վաղուց սպասում էր նախասենեակում Մանուէլ Կարպովիչի երեալուն: Նա անհամբերութեամբ յետ ու առաջ էր գնում գալիս և ինքն իրեն խօսում.

— Ինչու այրքան ժամանակ չէ երեում, միթէ մինչև հիմայ քնած է: Չինի՞ թէ մի բան է պատահել, տէր իմ Աստւած, գիշերս լաւ երազ էլ չեմ տեսել:

Նախասենեակ մտաւ ծառան և մօտենալով Արշակին, ասաց.

— Երեում է աղան դեռ չէ կշացել, որ ահա ժամի 10-ը անց է չէ երեում:

— Ամեն օր շնուտ է վեր կենում, հարցրեց հետաքրքրութեամբ Արշակը:

— Ո՞չ այնքան, 10-ից շուտ չէ զարթնում: Սյոյն ըոտէին լուեց զանգի ձայն:

— Արդէն վեր է կացել, երկի ջուր չկայ լւացարանում:

— Շտապիր Մանցօ, ասաց Արշակը և յայտնիր իմ մասին:

Ծառան շտապով անցաւ խոհանոցի կողմը:

— Այսօր արդէն, ես կունենամ փող, ասում

Եր Արշակը ինքնաբաւական ժպիտը դէմքին. հետաքրքիր է տեսնել Անթառամին ի՞նչ օրի է, ի՞նչպէս կընդունի ինձ. Ոչինչ, եթէ այս անգամ խամութիւն անէ, յետոյ կսովորէ և ուրախ կինի, դեռ անփորձ է: Ես լաւ եմ իմանում կանանց թող կողմերը, հարկաւոր է շոյել, թանկագին լաթեր և պսպղուն զարդարանքներով զարդարել և նրանք ամեն ինչ պատրաստ են գոհելու:

Ներս մտաւ ծառան, ուրախ-ուրախ բռնեց Արշակի ձեռքը, ասելով:

— Քէֆդ քօք պահիր, Արշակ, աղան շատ ուրախ տրամադրութեան մէջ է և յայտնեց, որ ցանկանում է քեզ տեսնել: Արշակ, համա ինձ չմոռանաս հա, վերջին բառերը ծառան արտասանեց խորհրդաւոր կերպով, քաելով բութ մատը ցուցամտին:

— Աչքիս վրայ, պատասխանեց Արշակը և զնաց ուղիղ Մանուէլ Կարպովիչի առանձնասենեակը, որ մի կոկիկ սենեակ էր բժշկական գործիքներով, գեղերով և հաստափոր զրքերով: Փոքը ինչ յետոյ սենեակ մտաւ Մանուէլ Կարպովիչը, բարենց Արշակին, ասելով.

— Ես անգամ որ քեզանից գոհ եմ, Արշակ, այ, ի՞նչ եմ ասել, արժէ այդպէս ապրանք ունենալ...

— Ծաղրում էք, Մանուէլ Կարպովիչ, թէ ու-

դիդն էք ասում, հարցրեց Արշակը ձգւելով և ուղիղ բժիշկի աչքերին նայելով:

— Ճշմարիտն եմ ասում, որ այդ աղջիկը քեզ համար անդին գանձ է: Տեսնես արթնացել է, թէ քնած է:

— Զեր ննջարանում չէր միթէ:

— Ոչ, մենք տիկնոջ ննջարանումն էինք, ես միայն կէս զիշերից անց թողի նրան միայնակ և հեռացայ իմ ննջարանո:

— Շատ ցանկանում եմ, Մանուէլ Կարպովիչ, նրան տեսնել, եթէ կարելի է, գնանք տեսնենք զարթնել է, թէ ոչ:

— Գնանք, համաձայնեց բժիշկը և երկուար միասին անցան տիկնոջ ննջարանը:

Այս ի՞նչ սոսկալի տեսարան էր, որ բացւեց նրանց առաջ:

Լւացարանի մօտի կախարանից, ոլորած սբրէչը վկին կապած, կախ էր ընկած Անթառամի մարմինը գիշերային շապիկով: Նրա մագերն ամբողջ գգգգւած էին, երեսը ծւիկ-ծւիկ եղած ու արիւնլւայ: Կիսաբաց, արիւնոտ աչքերը և քիչ ծուած բերանը, կապուտակ շըմունքները տեսնողի վրայ սարսափ էին ազդում:

— Այս ի՞նչ եմ տեսնում, Աստւած իմ, զուաց Արշակը և մի երկու քայլ յետ գնաց:

— Ահ, ողորմելի կին, ի՞նչն էր քեզ ստիպում այդ քայլն անելու, չէ՞ որ այդպիսի վարդ գիշ-

ղեցկութեամբ կարող էիր թագուհու կեանք վա-
րել և պալատներում ապրել, ասաց բժիշկը սառ-
նասիրտ:

— Բժիշկ, մենք կորած ենք, ի՞նչ անենք.
ասաց Արշակը վախեցած:

— Երեխայ, ծիծաղեց Մանուէլ Կարպովիչը,
դառնալով Արշակին, էլ որ օրւայ բժիշկն եմ, որ
չկարողանամ մի խեղդւածի յանկարծամահ ցոյց
տալ, մոռացար միթէ, որ ես բժիշկ եմ...



Տեղափոխ
Հայոց ազգի
առաջարկած կողմէ

1. Yeo-hay
2. "P. Penmeyer"

Yeo-hay

P. Penmeyer

17300

Yap-han.

2013

